Հրապարակման ենթակա չէ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2024թ. հոկտեմբեր 15-ից 19-ը քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Աշոտ Մուրադյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

Գարիկ Մինասյան - էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության պետ

Լևոն Նալբանդյան - ՀՀ ՊԵԿ «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ Նախագծային ռիսկերի կառավարման դեպարտամենտի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2024թ. հոկտեմբերի 15-ից հոկտեմբերի 19-ը

3. Հրավիրող կողմը՝

Հրավիրող կողմը ՌԴ մաքսային ծառայություն, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ ԵՏՀ կոլեգիայի մաքսային համագործակցության հարցերով նախարար

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Օդանավակայանում էքսպրես բեռների (առաքանիների) և օդային տրանսպորտով տեղափոխվող բեռների նկատմամբ իրականացվող մաքսային գործառնությունները և դրա իրականացման համար կիրառվող էլեկտրոնային համակարգերը:

ԵՏՀ հարթակում ներկայացնել ՀՀ ՊԵԿ կողմից ներդրված և շահագործվող «Ազգային մեկ պատուհան» պորտալի և դրա մաս «Թույլատվական փաստաթղթեր» համակարգերը

5. Քննարկված թեմաները՝

էքսպրես բեռների (առաքանիների) վերաբերյալ.

1. Փոխադրողների կողմից էքսպրես բեռների (առաքանիների) մաքսային հայտարարագրի լրացում՝ ապրանքների կոմերցիոն նկարագրերի և ԱՏԳ ԱԱ ծածկագրերը 6 նիշի մակարդակով նշումով,

2. Էքսպրես բեռների (առաքանիներ) հայտարարագրման ընթացքում առաջացած մաքսային վճարների ամբողջական վճարում փոխադրող ընկերությունների կողմից,

3. Էքսպրես բեռների (առաքանիների) մաքսային զննումը և տեսազննումը հիմնված ռիսկերի կառավարման համակարգի վրա,

4. Էքսպրես բեռների (առաքանիների) մշակման համար սկանավորող և այլ մեխանիկական սարքավորումի կիրառության հնարավորություններ՝ ինքնաշխատ համակարգով իրականացվող հսկողության անցման նպատակով:

5. Ժամանակավոր պահպանման պահեստներում ապրանքների բաց թողնման առանձնահատկություններ

6. Ռենտգեն սկանավորող սարքավորումներից ստացվող նկարների ճանաչման փորձի փոխանակում՝ մեքենայական ուսուցման և արհեստական բանականության տարրերի կիրառմամբ:

«Ազգային մեկ պատուհան» պորտալի ներդրման ՀՀ փորձի ներկայացում

1. Համակարգի տեխնիկական կարողությունների և կառուցվածքի, ներդրման ընթացքի վերաբերյալ պարզաբանումների տրամադրում
2. Ներգրավված այլ գերատեսչությունների հետ աշխատանքների համատեղ կազմակերպման մոտեցումների և բիզնես գործընթացների օպտիմալացման փորձի ներկայացում
3. Տնտեսվարողների նույնականացման և լիազորությունների բաշխման գործընթացների առանձնահատկությունների ներկայացում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ելույթներ նախատեսված չեն եղել:

Քննարկվել են ՀՀ փորձը ԵՏՄ հարթակներում աշխատաժողովներում լրացուցիչ շնորհանդեսներում ԵՏՄ մյուս անդամ պետությունների մասնակիցներին նույնպես ներկայացնելու հնարավորությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նշված հանդիպման ժամանակ փաստաթղթեր չեն ստորագրվել, ձեռք են բերվել պայմանավորվածությունները՝ հնարավորության դեպքում, ավելի մեծ թվով աշխատակիցների ներգրավվմամբ աշխատանքային հանդիպման կազմակերպման վերաբերյալ:

Ռենտգեն սարգավորումների կիրառության փորձ ունեցող աշխատակիցների ներգրավվում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ-ում էքսպրես բեռների մաքսային հայտարարագրման գործընթացում կիրառել միության իրավունք հանդիսացող որոշումներով հաստատված կարգերը ՌԴ մաքսային ծառայության կողմից կիրառվող փորձի համաձայն, հաշվի առնելով նրանց կողմից ներդրման ընթացքում հանդիպած դժվարությունները և դրանց լուծման եղանակները:

էքսպրես բեռների փոխադրողներին տեղեկացնել իրավակիրարկ պրակտիկայի վերաբերյալ, նախանշելով ներդրման պատրաստվող համակարգի առանձնահատկությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշոտ Մուրադյան-

Գարիկ Մինասյան-

Լևոն Նալբանդյան-

22.10.2024թ.